









ԳՐ. ՂԱՓԱՆՑԵԱՆ

ՀԱՅԱ-ԱՐՄԵՆԱԿԱՆ ԼԵԶՈՒԱԽՄԲԻ
ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա. ԷԶՄԻԱՇԻՆ

Ե. Մանուկ Տոլարան Մայր Աթոռ

1917

491.99	A ¹¹ 1897	
	Պատկանում է զ.	
"Հայր - Թրսեւանք"		
Եւթիւսի ազ. բաժանում:		
		5m.

Երևան

1921թ.

ԳՐ. ՂԱՓԱՆՑԵԱՆ

491.93

2

«ՀԱՅԱ-ԱՐՄԵՆԱԿԱՆ» ԼԵԶՈՒԱԽՄԲԻ
ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

— ❦ —



Ս. ԷԶՄԻԱՇԻՆ

Էլեկտրագրոսի Տպարան Մալի Արտոույ

1917

1897

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԿՈՄԻՏԵ

Արտատպութիւն «Արարատ» ամսագրի 1917 թ. № 2-3-ից

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԿՈՄԻՏԵ
Ի ՎԵՐՈՒՄ

«ՀԱՅԱ-ԱՐՄԵՆԱԿԱՆ» ԼԵԶՈՒԱԽՐԻ

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱՌԻԹԻՒՆԸ.

revelation

Յայտնի գիտական փաստ է, որ մարդկային լեզուն հանդիսանում է գրեթե եզակի և ամենաուղիղ միջոցը, իբրև բնորոշիչ և հաստատիչ criterium այն ազգերի և ցեղերի ազգակցման համար, որոնք դեռ ապրում են իրենց հնագույն լեզուի ձևով և վերջինը չեն փոխել դարերի ընթացքում մի այլ լեզուական միաւորի հետ: Իսկ լեզուների ազգակցութիւնը երևան է գալիս և ապացուցւում հարկաւ որոշ ինքնայատուկ սկզբունքների միջնորդութեամբ¹⁾: Դրան հիմք է ծառայում այն, որ լեզուների բառակազմի համեմատական հետադօտումը կատարւում է միայն սրոշ լեզուաբանական և մասնաւորապէս հնչափոխական օրէնքների հիման վրայ, ի մէջ առնելով նաև որոշ «լեզական» և «առալեզուական» գործօնների ընդհատական (ընդմիջական) ազդեցականութիւնը²⁾: Այդօրինակ պատմա-համե-

1) Լեզուական միաւորներից ամենամատչելին են դառնում համեմատական լեզուաբանութեան համար միայն այսպէս ասած «մորֆիկական» ձևի լեզուները, որոնց ձևաբանական կազմը մեղ պարզ և վերլուծելի է. հմտ. օր.՝ «մորֆիկական» լատիներէնի cred-ere «հաւատալ», di-re(-n-m «ուղիղ», ar-ur-cu!-s «քեռի», diur-nu-m «օր»... բառերի ձևամասերը և միւս կողմըց ազգակից «ամորֆիկական» ֆրանսերէնի croit, droit, oncle, jour... բառերի ձևակազմը:

2) Լեզուի բնական զարգացման միակ մշտնջենաւոր չափանիշը հանդիսանում է պատմական հնչափոխութիւն» կոչուած օրինաչափական երևոյթը, հանդերձ «ալտերնացիայով», «անկումներով», «Lautsteigerung-ներով», «непедоѣ-ներով», «ասսիբիլիացիա-ներով» — «գիսսիբիլիացիա-ներով», «ասսիմիլիացիա-ներով» — «գիսսիմիլիացիա-ներով», «թաւացումներով» եւն, թէև այդ վեր-

մատական լեզուաբանական մեթոդողիայով նախ որ
գիտութեան մէջ վերակենդանանում է լեզուների զար-
գացման բնական ընթացքը, ուր այդ զարգացումը ազգա-
կից ենթաբարձրառների, բարձրառների և լեզուների մէջ
երևան է բերում գոյանալիք տարբերութիւնների տատ-
ճանական աճումը և հնարաւորութիւն է տալիս մօտաւո-
րապէս վերականգնել լեզուի նախկին և աւելի հնագոյն
պատկերը. երկրորդ՝ որ վերածելով լեզուն իրեն հնագոյն
ձևի մենք կարող ենք «հնչական փոխադրութեան» (фонетический перевод) միջոցով համեմատել գրան ուրիշ լե-
զուների հետ, գտնել այսպէս ասած ազգակցական բովան-
դակութիւնը:

Գալով դասական հայերէնի և այժմեան հայոց բար-
բառների «ազգակցական բովանդակութեանը», պէտք է
ասել, որ դրա տեսութեան բնորոշիչ կողմերը իրենց էա-
կանում արդէն վերլուծուած և յայտագծուած են Hübsch-
mann-ից և Marr-ից. միւսների աշխատութիւնները, ինչպէս
Meillet-ի և մասամբ Fr. Müller-ի, Chr. Bartholomae-ի, S.
Bugge-ի, Pedersen-ի և այլն¹⁾ մեր այդ լեզուների միայն
համեմատական բաղկացութիւններն ու մանրամասնու-
թիւններն են երևան հանել, կատարելով այդ լեզուների
ազգակցականութեան հանդէպ լոկ լրացուցիչ գեր. Իրրե

ջինների «օրինաչափական» լինելը տարակուսելի կարող է համա-
րուել: Իսկ «լեզուական» և «ազգայնական» ֆակտորների ընդ-
միջական ազդեցութիւնն է՝ առաջինների՝ «մեկտաթէզիս», «անտի-
ցիպացիս», «ժողովրդական ստուգարանութիւն» (Volksetymologie),
«անալոգիա»... — երկրորդների, այսինքն «ազգայնական» ֆակ-
տորների ազդեցութիւնը՝ լեզուների ընդ խառնակումը նուա-
ճումների և տեղափոխութիւնների միջոցով (ինչ որ տեղի է ունե-
ցել, օր., հայոց լեզուների վերաբերեալ), սոցիալական և տնտե-
սական պարագաները, կլիման ևն:

1) Liden-ի Armenische Studien (Göteborg, 1906) աշխատու-
թիւնը միանգամայն զերծ է գիտական համարուելուց և ցոյց է
տալիս հեղինակի չափազանց համարձակ լինելը համեմատական
կապակցութիւններ անելու մէջ, ինչպէս և նրա ոչ խորը ծանօթ
լինելը մեր լեզուախմբի «ազգակցական դէմքի» հետ:

մակարերութիւն և արգասիք այդ բոլորի այժմ գիտական զոգմայի պիտ դասուի այն, որ համեմատական լեզուաբանութեան տեսութեամբ մեր «հայա-արմենական» լեզուները հանգիստանում են տարրեր և միջև անգամ հապապակեր լեզուական սիստեմների և տարրերի մի զանգուածք, այդու ներկայացնելով մի տիպիկ «խառն լեզու» (Mischsprache): Իսկ մեր այդ լեզուների հիմնական բաղադրիչ մասերն են կազմել հնդկա-եւրոպական (կամ աւելի ուղիղն՝ արիո-եւրոպական) և յարեթական լեզուական ընտանիքների¹⁾ կաղապարուած որոշ ձևեր, որոնք իրենց հարկադրաբար ներկայակցուելով և ձուլուելով առաջ են բերել այդ «խառն լեզուները»: Պատմութիւնն ևս իրեն հերթին գալիս է հաստատում մեր լեզուների «խառնակութիւնը», թէև շեղ կերպով, ընդունելով a priori, որ հայ ազգի կազմակերպման պատմական պրոցեսսը (հնդկա-եւրոպական և յարեթական ցեղերից) անդրադարձած պէտք է լինի և այդ ազգի լեզուի վրայ:

Ի հարկէ համեմատական ուսումնասիրութիւնը չի կարող ազգակցօրէն վերլուծել և սպառել մեր լեզուների բոլոր պատկանելիութիւնները և տարրերը, որովհետև վերջինների մի որոշ մասը երևան է եկել մեր արդէն կաղապարուած լեզուների լոկ զարգացման ընթացքում, իբրև դրանց ստեղծագործութիւն կամ նորանոր էթնիկական հոսանքների ժառանգութիւն, իսկ մնացածի էլ ստուարագոյն մի մասը չի գտնում ուրիշ ազգակից լեզուներում իրեն համապատասխանող ձևերը, սոսկ բացակայութեան պատճառով: Միայն այն կարելի է մատնանշել, որ ազգակցօրէն չվերլուծուած մասն ևս առաւելապէս յարում է

1) Յարեթական լեզուների ընտանիքը, պրոֆ. Մառի այդ հանճարիդ գիւտը, փռուած է եղել առաւելապէս փոքր Ասիայի հիւսիս-արեւելան մասում և Կովկասում և ազգակից է համարւում սեմական լեզուների հետ, իբրև երկւորեակներ (տես մանրամասնութիւնը Н. Марр, Основные таблицы къ грамматикѣ древне-грузинскаго языка, СІІВ. 1908):

իւր «տեսքով»¹⁾ և ֆունկցիաներով ստուգարանօրէն արդէն որոշուածին:

Բայց նախ քան մեր լեզուների «ազգակցական բովանդակութիւն» կազմող պատկանելիութիւնների և տարրերի յայտագծելը՝ մեզ համար պարզաբանելի պէտք է լինի, թէ ինչ պատմա-լեզուաբանական ներքին փոխյարաբերութիւնների մէջ են գտնուում մեր «հայա-արմենական» լեզուները: Մեզ յայտնի երեք լեզուական տարրերակներից, այն է՝ «գրաբարից, միջնադարեան (Կիլիկիայի) հայերէնից և այժմեան բարբառներից, միջնադարեանը հանդիսանում է միայն հնագոյն ձևը այդ բարբառների կը ճիւղի, այն էլ այդ ճիւղի երևի որոշ ձևի. իսկ դասական հայերէնի («գրաբարի») և ներկայ բարբառների փոխյարաբերութիւնները տակաւին չի կարելի վերջնականապէս լուծուած համարել: Ցայժմ գերիշխող կարծիքն էր, որ մեր արդի բարբառները ծագել են դասական հայերէնից, բայց այդ գուրկ է գիտական հող ունենալուց, քանի որ դրա դէմ կան շատ լուրջ «լեզուային» և «տպակագուային» խոչնդոտներ: Ունինք յետոյ պատմական տեղեկութիւն (Ստրաբոնի¹⁾), որ արդէն Արտաշէս I-ի ժամանակ (189 թ. Ք. ա.) Հայաստանում մի լեզուով էր խօսուում, և հետևապէս պէտք է կարծուի, որ մեր «գրաբարը» և այժմեան բարբառները ձևացել են այդ ընդհանուր մի հայ լեզուից: Բայց այդ էլ անհաւանական է, աչքի առաջ ունենալով, որ Քսենոֆոնի ժամանակ իսկ (400 թ. Ք. ա.) դեռ ապրելիս են եղել, օր. Տարօնում²⁾, այլևայլ ցեղեր, և

1) Որոշ լեզուաբանական տուեալների նկատառումով կարելի է պնդել, օր., որ «անձն», «ազգր», «սանտր», «լինտր», «անդդ», «մէտ-միտեմ», «մատչիւմ», «նօսր» ևն աւելի յարում են հնդ.-եւրոպական նախալիզուի սիստեմին, մինչդեռ «խիղճ», «ծղրիղ», «սովորել», «ծեծել»... յարեթականին:

2) Տես Ս. Адопц., Армения въ эпоху Юстиниана (СПБ, 1908), էջ 395 և Ստրաբոնից բերած ծանօթութիւնը (Str. XI, ὅστε πάντας ομογλώττους εἶναι) և այդ կարծիքին համաձիւս է ինքը Ադոնցը (էջք 395, 399):

3) Տես Ն. Ադոնցի նոյն գիրքը, էջ 417. (Anab. IV 3, 4. Ἀρμένιοι καὶ Μάρδοι καὶ Χαλδαῖοι):

զարմանալի կլինէր տարբեր ցեղերի ձուլուելը մի երկու հարիւր տարուայ ընթացքում, քանի որ, օրինակ, ներկայումս գիւղերի խօսուածներ անգամ հարիւր տարուց աւելի են ապրում, այն էլ աւելի assimilativ հանգամանքներում ('լաւ հաղորդակցութիւն, զօրեղ կուլտուրա...): Վերջապէս պրոֆ. Մառի կարծիքն է՝ որ մեր դասականը և արդի բարբառները առաջացել են երկու տարբեր լեզուական գանգուածքից, անուանելով պայմանական կերպով մէկը «հայական», միւսը «արմենական»։ սկզբում զրանք համագօր միաւորներ են եղած, բայց յետագայում, պատմական հանգամանքների շնորհիւ, «հայականը» («գրաբարի» նախահայրը) ուրոյնացել է իրեն դործածութեամբ միայն ազնուականութեան խաւերում, իսկ «արմենականը» (արդի բարբառների նախահայրը)՝ ժողովրդական։

Մեր լեզուների համեմատական քերականութիւնը զրանց մէջ մեծ անջրպետներ է գտնում։ Եւ այդ տեսութեամբ չնայեած որ մեր արդի բարբառները իրենց հնչաբանութեան, ձևաբանութեան և շարահիւսութեան բնորոշիչ յատկութիւնների մեծ մասը ստեղծել և զարգացրել են թերևս մի հազարամեայ ժամանակաընթացքում, յամենայն դէպս «գրաբարի» կենդանի խօսակցական լինելուց այս կողմը,—այնուամենայնիւ մեր «նամկական» լեզուն ունեցել է և այդ «ոստանիկ գրաբարի» ժամանակ իրեն յատուկ քերականական ձևերը, ինչպէս, օր., բացառականի—ից վերջաւորութիւնը, յատուկ մորֆեմայի («ձևանիշի») կիրառումը յոգնակիութեան (—եր,—ներ,—անի,—տի...) և երկակիութեան (—ւի՝ աչւի, ձեռւի...) համար, ժամանակի անուանց ուրոյն հոլովումը («ւոով՝ օրւայ, տարւայ...), կրաւորական բայի կազմութիւնը («ւոով՝ ուտուել, սպանւել...), անցեալ—ած վերջացող դերբայը..., որոնք կամ չեն պատահում դասական հայերէնում, կամ եթէ պատահում էլ են՝ այդ ժողովրդական («նամկական») լեզուի ազդեցութիւնը պէտք է համարել։ Նոյնչափ զգալի է այդ անջրպետը և մեր լեզուների բառարանի մէջ, ինչպէս, օր., «արմենական»՝ հա, ձախ, տարի, ձի, թուշ...

բառերը հանդէպ «հայականի»՝ այո, անհակ, ամ, երիվար, այո ևն, ի հարկէ մեր այդ լեզուների փոխարարերութիւնների և փոխազգեցութիւնների պատմա-լեզուաբանական վերլուծումը չի կարող ողջ և բովանդակ լինել, քանի որ զրանց լեզուական նիւթը բաւականին ուշ ժամանակ է արձանագրուում, մանաւանդ «ռամկականին», և հետևապէս այդ լեզուների զարգացման հնագոյն ձևերը, որոնք ամենից կարևոր են, մեզ մնում են անյայտ:

Արդ ուրեմն՝ լեզուաբանութեան նորագոյն տեսութիւնը գտնում է, որ հայ ազգը պատմականօրէն պահել է երկու լեզու, աչքաթող անելով մինչ իսկ զրանց գենետիքական փոխարարերութիւնը միմեանց հանդէպ և զարգացման հնագոյն շրջանը. երկրորդ՝ որ մեր լեզուների սկզբնական խմորման և ձևաւորման կազմիչներն են եղել հնդկա-եւրոպական և յաբեթական լեզուների որոշ պատմաձևերը, և որ մեր լեզուները, հետևապէս, յայտ են եկել որպէս «խառն լեզուներ», անկախ նրանից թէ որ տարրն է զօրեղ իւրաքանչիւրի մէջ՝ հնդկա-եւրոպականը թէ յաբեթականը (— առաջինը երևան է հանուել և ուսումնասիրուել առաւելապէս Hübschmann-ից և Meillet-ից, իսկ երկրորդը՝ Marr-ից): Բայց որ մեզ համար բացատրելի և հասկանալի լինին թէ մեր լեզուների գենետիքական և լեզուական փոխարարերութիւնները միմեանց հանդէպ և թէ մանաւանդ զրանց կազմիչ շերտերի (տարրերի) յարակցութիւնը ուրիշ լեզուների հետ, անհրաժեշտ է մեզ և կանխաւ ծանօթ լինել այն պատմական պրոցեսներին, որոնք առաջացրել և որակել են հայ ազգի «էթնիկան» և լեզուները:

Պրոֆ. Ն. Ադոնցը հետևեալ տեսութիւնն է աալիս այդ խնդրի մասին. «Для иллюстраціи соотношенія арійскаго и семитическаго элементовъ въ армянскомъ языкѣ слѣдуетъ допустить, что первоначально Армения входила въ полосу разселенія разныхъ племенныхъ группъ, карду-ховъ, мос-ховъ, са-спейровъ [халд-овъ] и пр. съ преобладающими арамейскими элементами. Извѣстное нашествіе киммерійцевъ въ VII в. выз-

вало въ Малой Азіи передвиженіе народностей: фригійскіе армяне, вытѣсненные изъ своихъ предѣловъ, перешли Евфратъ и врѣзались въ мѣстное арамейское населеніе; часть его осталась на сѣверѣ, часть на югѣ, а покоренная полоса смѣшалась съ побѣдителями. Отъ сліянія пришлыхъ фригійцевъ съ аборигенами преимущественно арамейскаго происхожденія сформировалось ядро армянской народности.... Къ основной массѣ присоединились другія племена; къ ней постоянно притекали этническія струи изъ обранныхъ, изъ предѣловъ Атропатены, Иберіи, Каппадокии и Сиріи. Ассимиляція народностей продолжалась до Заріадра и Артаксія; тогда и завершился одинъ изъ важныхъ періодовъ арменизаціи страны. Наканунѣ возникновенія имперіи Тиграна Великаго племенные разновидности успѣли сгладиться настолько, что все населеніе говорило на одномъ общемъ языкѣ»... (мѣл. Н. Адонцъ, Армения въ эпоху Юстиніана, СПб, 1908, стр. 397—399).

Фриг. Ն. Մարզ գրեթէ նոյն լուսաբանութիւնն է արարի այդ խնդրին, բայց ակերբ ընդարձակ կերպով. «Арменія до появленія аrio-европейцевъ населена была различными яфетическими народами и племенами такъ же, какъ другія страны кавказскаго міра. Потоки арійской иммиграціи, древнѣйшіе, одни шли съ запада черезъ Фригію, другіе съ востока—изъ Ирака. Ни тѣ, ни другіе не сносили коренного населенія, а лишь дали толчокъ къ передвиженію наиболѣе свободолюбивыхъ яфетическихъ племенъ на сѣверъ, къ тылу кавказскаго міра, а затѣмъ съ оставшимися на мѣстѣ постепенно смѣшались. Сообразно съ населеніемъ Арменіи, тогда въ ней и языковъ яфетическихъ было такое же разнообразіе, какое наблюдаемъ въ другихъ странахъ Кавказа. Когда аrio-европейцы расселились въ странѣ, ихъ нарѣчія, аrio-европейскія нарѣчія, разлились по ней однородной массой, но, слившись съ различными мѣстными яфетическими языками, въ результатѣ дали различные языки мѣшаннаго типа, различные

яфетическо-аріоевропейскіе языки... Пока неизвѣстно, сколько въ дѣйствительности было первоначально на территории Арменіи чистыхъ яфетическихъ языковъ, сколько тамъ же образовалось мѣшанныхъ аріо-европейскихъ языковъ по вторженіи аріо-европейцевъ. Сами армяне сохранили намъ два такихъ мѣшаного типа яфетическо-аріоевропейскихъ языка. Ихъ мы называемъ для различенія двумя условно распредѣляемыми названіями: одно названіе въ употребленіи только у самихъ армянъ, это—«байскій» или «гайканскій», другое—международное, это—«армянскій». Одинъ изъ двухъ языковъ Арменіи, гайканскій или байскій, сейчасъ мертвый языкъ: онъ сейчасъ—языкъ армянской церкви и языкъ древней литературы армянъ. Въ древности онъ былъ не только литературнымъ, но и живымъ. Первоначально живой языкъ одного изъ народовъ Арменіи на ея юго-востокѣ, на рубежѣ съ Сиріей и Персией, вмѣстѣ съ возобладаніемъ этого народа по всей Арменіи, байскій сдѣлался языкомъ армянскихъ князей и феодаловъ и въ тѣхъ частяхъ страны, гдѣ природнымъ языкомъ былъ другой языкъ, армянскій. Послѣдній постепенно стонялся внизъ и былъ согнанъ въ простонародіе, сталъ въ феодальной Арменіи языкомъ низшаго сословія или простонародія»... (мѣш. II. Марръ, Кавказскій Культурный міръ и Арменія, т. 2, стр. 27—30¹⁾).

1) Համաժխ չիմ իմ մեծայարգելի պրոֆ. Մանր հեռ, որ «ամ», «ամիկ» բառերը Հեափոխումն են «армяннвъ» բառի (ib, 30), համարելով այդ «ամ»ը Hübschmann-ի հեռ պարսիերէն gam, gama «Shar, Herde» բառը, որի երկրորեակ հայերէն ձևն է և «երամ», «երամակ» բառը (մեռ Hübschm., Arm. Gram., էջը 233, 147): նմանապէս համաժխ չիմ, որ haie-ձիը առաջացել է *hanic-x (չիօչա) ձևից: Իմ բառը անտարախոյս հնդկա-եւրոպական հայերէն է պատկանում, հաւանորէն պահած լինելով փոխաբացոց նախահայրենիք Παλιον բառի մէջ (Մակեդոնիայում). Ստորաբոնէ էլ է հայերէն Թեսալոնիայից սերում իրենց զգեստի տեսակէտից՝ και την εοθητα οὗ την Ἀρμενιακήν Θεσσαλικήν φάσιν, οὗον τους βαθεῖ χιθωνας... και ζωννουςσιν περί τὰ στήθη και εραπίδας (մեռ Н. Адонцъ, Арменія въ эпоху Юстиніана, էջը 398—399, διωκο-

Այդպէս կնշանակի՝ մեզ համար պատմագիտականօրէն միանգամայն պարզորոշ է, թէ ինչ պատմական պրոցեսներն և պարագաներն արդիւնք են մեր հայ ազգը և իրեն լեզուները, ընդունելով *a priori*, որ այդ լեզուները փոխառնուած չեն, Լեզուական նիւթի «ազգակցօրէն» վերլուծումը հաստատիչ ու ներդաշնակ է այս դէպքում և իրեն կրող ազգի էթնիկական ձևաւորման հանդէպ, և ընդհակառակը: Մեզ համար գիտական դոգմա պիտ համարուին առաջին՝ որ պատմական Հայաստանի հարաւային մասն է եղել հայ ազգի և լեզուների բնագաւառը և որ, բնորոշ, երկրորդ՝ որ մինչև «պատմական» հայ ազգի կազմուելը այդ տեղում ապրելիս են եղել առաւելապէս այլևայլ յարեթական ցեղեր (ոչ «արամէական», այսինքն սեմական, ինչպէս անուանում է Ադոնցը)՝ ազգակից, ըստ պրոֆ. Մառի, սեմական ժողովրդների հետ, երրորդ՝ որ եկւոր «փոխգիտական հայերի» և այդ տեղացիների ձուլուելուց է առաջացել պատմական հայ ազգը¹⁾ և չորրորդ՝ որ այդ ազգի լեզուն (կամ լեզուները) գոյացել է երկու լեզուական սխառեթների և տարրերի հարկադրաբար բաղադրուելուց և ներկապակցուելուց՝ հնդկա-եւրոպական և յարեթական, պատմականօրէն մեզ յայտ գալով երկու տարբերակներով՝ «ոստանիկ» բարբառով և «ռամկական»: Մեր բուն նպատակն է՝ տալ այդ լեզուական տարբերակների «ազգակցական բովանդակութեան» յայտագծումը, տեսաբանելով այսինքն դրանց երկու հիմնաշերտերի «ազգակցական» փաստերը, անկախ այն խնդրի լուծումից, թէ մեր այդ երկու լեզուական միաւորները առաջացել են մի հնդկաեւրոպա-յարեթական զանգուածից թէ երկու:

Ի հարկէ մեր բուն խնդրի նկատմամբ առանձին պէտք է հաշուի առնուեն այն քերականական և բառարանական

թուծիւնը): Եկւոր փոխգիտական հայերի «հոս» անունը տեղացիներից վերցնելը նման է, օր., Գալլիայի կելտական ժողովրդից եկւոր գերմանական ֆրանկների «frank» անունը վերցնելուն:

1) Այդ էթնիկայի երկուութիւնը մասամբ երևան է հանուում և զանգաւափութեամբ:

պատկանելութիւնները, որոնք առաջ են եկել մեր լեզու-
ների պատմական դարգացման ընթացքում, բոլորած լինե-
լով մեծամասամբ «երկութեամբ» կաղապարուած իրենց
բնութիւնից: Նմանապէս առանձին տեղ է բռնելու այն
լեզուական պաշարը, որը թողել են մեր լեզուների մէջ
(«հայացրած» ձևով) այլևայլ նորեկ ցեղեր՝ մեծ մասամբ
կովկասից և Իրանից, ձուլուելով արդէն կաղապարուած
հայ ժողովրդի հետ, և որը պէտք է զատուի զուտ փո-
խանութիւնների շարքից ¹⁾:

*
* *

Տնտղման առնենք այժմ մեր խնդրի բուն, այսպէս
ասած, նիւթական մասը, այսինքն թէ ինչումն է կայացել
հնդկա-եւրոպական և յարեթական լեզուական որոշ սիս-
տեմների և տարրերի յայտնագործումը մեր լեզուների
խմորման և կազմակերպման հանդէպ. եւ հարցը բովան-
դակապէս լուծուած կլինի, եթէ դիտենք նախ մեր լե-
զուների հիմնաշերտերի «գենետիգիան», յետոյ՝ հնդկաեւ-
րոպա-յարեթական երկու լեզուաշխարհների համագործակ-
ցական յայտ գալը մեր լեզուների հնչա-ձևաբանական
սիստեմի ձևաւորման և կառուցման հանդէպ և վերջապէս՝
այդ երկու լեզուաշխարհների զուտ «նիւթական» ժառան-
գութիւնը (մորֆեմաները և բառերը):

Մեր լեզուների հնդկա-եւրոպական շերտի «գենետի-
գիան» պարզորոշ է. հայկական լեզուախումբը պատկա-

1) Սխալ է գործում իմ մեծ ուսուցչապետ Մառը (տ. «Кавк.
культурный миръ и Армения», էջ 28), որ զուտ իրանական փո-
խանութիւնները մեր լեզուախմբի «հնդկա-եւրոպականութեան»
մէջն է մտցնում. այթ փոխանութիւնը, որոնք, ինչպէս Մառն
ասում է, հայերէնում աւելի շատ են, քան թէ այժմեան պարս-
կերէնն ունի պարսկական բառեր,—բնաւ չեն ազդել մեր քերա-
կանութեան վրայ և նման փոխանութիւններ են, ինչպէս և յու-
նարէնից կամ ասորերէնից վերցուածը. իսկ այլ և այլ իրանական
ցեղերի (ձուլուած մեր մէջ) լեզուական նիւթը, որը կարող է
փնացած լինել, առանձին պէտք է հաշուի առնուի և մասամբ զրտ-
նուած է մեզնից (30—40 բառ): Դրա մասին առանձին:

նում է հնդկա-եւրոպական նախալեզուի արեւելեան բարբառներին («satam»¹⁾ կամ «s» բարբառներին), ինչպէս և հնդկա-իրանական («արիական»), բալտո-սլաւոնական և ալբանական լեզուախմբերը. ասել է թէ այդ արեւելեան բարբառներում հնդկա-եւրոպական նախալեզուի *K₁, *G₁ և *G₁h միջալեզուային («պալատալ») հնչիւնները անդրադառնում են առաջալեզուային՝ սպիրանտ կամ աֆֆրիկատ հնչիւններով, այն ինչ արեւմտեան բարբառներում (յու-նական, կելտա-լատինական և գերմանական) այդ *K₁, *G₁ և *G₁h հնչիւնները կրում են յետալեզուային հնչիւնական արտասանութիւն, ինչպէս, օրինակ, *K₁-ի վերաբերեալ՝ մեր «տաան» սանս. दादा, աւեստ. dasa, սլաւ. decать, լիտ. deszimtis., բայց յուն. δέξα, լատ. decem, գոթական taihun «Zehn» (h < x < < kh), կամ «սիրտ», սլաւ. срѣдце, լիտ. szirdis., բայց յուն. καρδιά. χῆρ, լատ. cor (սեռակ. cord-is), գոթ. haitro «Herz», հին իրլանդ. eride կըն²⁾։ Երկրորդ՝ հայոց լեզուական խումբը, ինչպէս և միւս հնդ.-եւր. արեւելեան բարբառները, չունի հնդ.-եւր. յետալեզուային *Kw, *Gw և *Gwh հնչիւնների շրթնային (w) յաւելուածքը, որը յատուկ է արեւմտեան բարբառներին (*Kw, *Gw, *Gwh = հայ. ք (չ), կ, գ (ջ) = սանսկ. k (c), g (j), gh (h) = սլաւ. k (ч, ц) г, (ж, з) г, (ж, з)... = յուն. π (τ), β (δ), φ (θ) = լատ. qu, u (gu), f (u)... և նման միւս արեւելեան բարբառներին³⁾ մեր «ք» և «գ» հնչիւնները հնդ.-եւր. *e և *i (*y)-ից առաջ դառնում են «աֆֆրիկատ» հնչիւններ («չ» և «ջ»)։

Այդպէս ուրեմն՝ մեր «հայտ-արմենական» լեզուա-

1) Այդ բառը նշանակում է «հարիւր» = սանսկ. satam, աւեստ. satəm, սլաւ. съто, լատ. centum կըն։

2) Հնդ.-եւր., *g₁ հնչիւնի վերաբերեալ համտ. մեր «ծին», սանս. jānah «родъ», աւեստ. zantus «племя»..., բայց յուն. γένος «родъ», լատ. genus, գոթ. kuni «родъ, семья»... իսկ *g₁h-ի վերաբերեալ՝ մեր «ծիւն», «ծմեռն» (<*ծիմեռն), սանսկ. hima «ծմեռն», աւեստ. zima-id., սլաւ. зима., բայց յուն. χιών = «ծիւն», χερμών, լատ. hiems կըն. (սանսկ. h < zh-ից, իսկ լատ. h < kh-ից)։

3) Բացառութիւն է կազմում լիտովականը։

խմբի հնգիա-եւրոպական «նստուածքը» պատկանում է այդ նախալեզուի արեւելեան բարբառածիւղին: Հաւանօրէն մեր այդ լեզուախումբը փոխաբերականի և թերեւ թրակիականի հետ կադմելիս են եղել մի խմբակցութիւն, իբրեւ այդ արեւելեան բարբառածիւղի մի ստորաբաժանում, բայց դրա համար ձեռքի տակ չունինք անհրաժեշտ տուեալներ: Meillet-ն հետեւեալ կարծիքն է յայտնում այդ խնդրի վերաբերմամբ. «То немногое, что мы знаемъ о фригійскомъ языкѣ, не позволяетъ намъ ни утверждать, ни отрицать того, будто, какъ говорятъ древніе писатели, армянскій языкъ представляетъ разновидность фригійскаго. Связь օրակійскаго съ фригійскимъ, на которую также указываютъ древніе, не можетъ быть установлена на основаніи документовъ, которыми мы располагаемъ» (տես նրա «Введение»-ն, էջը 60—61¹): Խոշոր ապացոյցներից մէկն է այդ «հայա-փոխաբերական կապի», մասնաւորապէս, միկենոյն Աստուծոյ անուն կրելը, ինչպէս փոխաբերական Տաթնուս և մեր «Astuac» անունները (Astuac <*Asuac <*Asbaj <*Sabaj²):

Իսկ մեր լեզուների յարեթական շերտը ազդակցականօրէն կարծես թէ աւելի է յարում և առնչութիւն կազմում յարեթական լեզուների «š» («չ») կամ «իվերական» ճիւղի հետ, այսինքն՝ միկերական և ճանական (լազական) լեզուների հետ, եթէ դրա համար նախապատուական կշռաչափ-ընդունենք հնչաբանական սկզբունքը՝ կարևորագոյն տեղ բռնողը, ինչպէս տեսանք, և հնդկա-եւրոպական լեզուների «ծննդաբանութեան» համար: Այդ իվերական (կամ ինչպէս Մառն է ասում՝ տուրալ-կայնական) լեզուախումբը ունի «քարթական» («S») խմբի հանդէպ հետեւեալ հնչաբանական հիմնայատկութիւնները. քարթական (զուտ վրացական) «ս» հնչիւնին իվերակա-

1) А. Мейе, Введение въ сравнительную грамматику индо-европейскихъ языковъ, перев. проф. Д. Кудрявскаго, Юрьевъ, 1911.

2) Шу Н. Марръ, Богъ Татну: у армянъ, СПБ, 1911.

նում համապատասխանում է «չ», քարթ. «զ» — իվեր. «ժ», քարթ. «ց» — իվեր. «չ», քարթ. «ծ» — իվեր. «ճ», քարթ. «ձ» — իվեր. «ջ», քարթ. «ը» — իվեր. «ջ» (որոշ պարագաներում), քարթ. «լ» — իվեր. «ը» (որոշ պարագաներում), քարթ. «ա» — իվեր. «ո» («օ»), քարթ. «ե» — իվեր. «ա». եւ վերջապէս իվերական լեզուախումբը կրում է այսպէս ասած «լիաձայնաւորականութիւն» (полногласие). օրինակ՝ քարթ. «սամի» (երեք) — իվեր. «շումի», քարթ. «սուլի» (հոգի) — իվեր. «շուրի», քարթ. «կացի» (մարգ) — իվեր. «կոչի», քարթ. «ձաղլի» (շուն) — իվեր. «շոդորի», քարթ. «կրեբա» (հաւաքել) — իվեր. (լազ.) «գորոփա» կն կն:

Հայերէնում այդ «իվերականութիւնը» երևում է, օրինակ, հետևեալ բառերում՝ ոչխար = լազ. «չխովարի» (Н. Марръ, Чанс. грам., էջ 213) = քարթ. «ցխովարի», շոդոքորթ = քարթ. «սլեքա» (სლეკა «ГЛАДИТЬ, ДЪЛАТЬ МЯКОМЪ», Н. Марръ, Осн. Табл., էջ 6, ծան. 8)¹, ճանճ < *ճանջ < *ճաջ = իվեր. (լազ.) «մ-ճաջի» = քարթ. «ծերի», շունչ < *շունջ < *շուջ = իվեր. «շուրի» = քարթ. «սուլի», տառ < *ճառ = իվեր. «ճարա» (զրել) = քարթ. «ծերա» (զրել). տարի < *ճարի = քարթ. «ծելի»² կն կն: Իսկ «լիաձայնաւորականութիւնը» հայերէնում ամենասիրելի երևոյթն է, ինչպէս՝ սովորել, խորովել³, խորոմ, ժողով, յուլով, կեղեքել, տերեւ, ծաղաւ, ծաւալ, շիրիմ և այլն. և

1) Մեր բարբառների «սղալի» (մազերը) բառը մեր կարծիքով փոխառնութիւն է «ս» ճիւղից. իսկ «յղկի» և «ողոք» (< *holog) բառերը, որոնք արմատակից են շոդոքորդ և քարթ. სლეკა («սլեքա») բառերին, մտել են մեր լեզուն («հայականը») յարեթական «շնչային» (спирантный) ճիւղից, որին պատկանում է մասամբ և սևաներէնը (տես В. Марръ, Определение яз. II-ой категории ахемени. клин. надписей, СПб, 1914, տախտակը):

2) Տես Н. Марръ, Яфетические элементы въ языкахъ Арменіи, II, 1911.

3) Հմմտ. վրաց ხეղვებდა («խուր-եր-ա») «жаръ, горячка», ვახელები («վա-խուր-եր») «накаляю, нагрѣваю, топлю, бросаю въ печь», см. Д. Чубиновъ, грузино-русскій словарь, 1887, էջ 1760.

այդ բնորոշիչ երևոյթը անդրադարձած է միմիայն մեր լեզուների յարեթական շերտում. բնաւ բացակայելով հնդկա-եւրոպական ծագում ունեցող բառերի մէջ: Ընդհանրապէս այն պէտք է ասել, որ մեր լեզուների յարեթական շերտը ստոյգ և բովանդակ կերպով տակաւին չի ուսումնասիրուած, ինչպէս հնդկա-եւրոպականը. և այդ հասկանալի է, քանի որ հէնց իրենք յարեթական լեզուները նոր են լեզուաբանութեան նիւթ դառնել (շնորհիւ պրոֆ. Մառի), և հետեւապէս այդ հայոց յարեթական լեզուաշերտի «գեներալիսի» համար դեռ շատ տւեալներ են պակասում:

Անցնենք մեր խնդրի երկրորդ մասին, այն է՝ թէ ինչու մէկ է կայացել երկու լեզուական աշխարհների համագործակցական յայտ գալը մեր լեզուների հնչա-ձևաբանական սիստեմի ձեւաւորման և կառուցման մէջ: Վերջնենք մի մասը՝ հնչիւնականը, և այստեղ մենք դիտենք մեր հայոց հնչաբանութեան կազմարանքի մէջ երեք մոմենտներ՝ հնչիւնաբանական «հոդը» և «շարժական միտումները», հնչիւնական կազմի «մշակոյթը» (выработка) և մասամբ պատմական հնչիւնական միտումների յայտնագործուիլը յետագայում: Արտասանութեան՝ ֆոնացիայի ինչ լմոյթի յատուկ լինելը փոխզիական հայերին և Հայաստանի անդրաժիններին մեզ հարկաւ յայտնի չի կարող լինել, նմանապէս և զրանց հնչիւնական տարբերակներին՝ ֆոնեմաների պաշարը (քանակը): Մեր հնչիւնների պատմական «ստատիկան» և «դինամիկան» միայն արձանագրուած են, առանց կազմիչ գործօնների որակը հաշուի առնելու. եւ գիտենք, օրինակ, որ հնադոյն հնդկա-եւրոպական *p, *t, *k հնչիւնները հայերէնում պատմականօրէն անդրադարձած են h («փ»-ից), թ, ք հնչիւններով, *b, *d, *g — մեր պ, տ, կ., որ մենք ունենք բ և ո, վ և լ, լ և դ, մթերուած անտարակոյս տարբեր լեզուական ներադրութիւններից, որ երկար ձայնաւոր չունենք, որ շեշտը որոշ անգ է բռնում և որոշ բնոյթ է կրում ինչ ինչ: Զրկուած լինելով մեր լեզուների պատմական կազմիչների և ֆակտորների բովանդակու-

թիւնը զիտենալուց (և հետեապէս հաշուի առնելուց), մենք հնարաւորութիւն ունինք, սակայն, և կարող ենք բացատրել և մօտաւորապէս հասկանալ նման լեզուական երևոյթներ, հիմնուած լինելով ընդհանուր—համեմատական լեզուաբանութեան տուեալների վրայ: Օրինակ՝ մեր բաղաձայնների պատմական ձևափոխումը կարող էր առաջանալ միայն նրանից, որ մենք որոշ կերպով էինք դրանք արտասանել (ինչպէս և գերմանական ցեղը), այն է՝ *p, *t, *k հնչիւնները չեն ունեցել ուժեղ implosio, *b, *d, *g հնչիւնները իրենց ձայնեղական մոմենտը յայտ են բերելիս եղել միայն պայթման (explosio) ժամանակ, որոնց հետեանքը այն է եղել, որ *p, *t, *k հնչիւնները տեղիք են տուել շնչայնացման և դառձել *ph (<h), th, kh (=հ, թ, ք), իսկ *b, *d, *g հնչիւնները, թուլացնելով իրենց ձայնեղութիւնը, դառձել են խուլ (պ, տ, կ): Նման դէպքը նոյն հիմնապատճառներով կրկնուել է և յետագայում, այն է՝ արդի բարբառների մէջ, ուր նախկին բ, դ, գ հնչիւնները դառնում են «փ», «թ», «ք» կամ «bh», «dh», «gh» կամ «պ», «տ», «կ», իսկ նախկին պ, տ, կ հնչիւնները՝ «բ», «դ», «գ» կայն: Շեշտը առաջ ընկնելիս է եղել բառի վերջնութեւր վանկը և եղել «արտաշնչողական» (эксспираторное ударение),—երևոյթ, որը առաջացել է մեր լեզուների յարեթական հիմնաշերտի մասնակցութիւնից (աչքի առաջ ունենալով և այժմեան վրացական վերջնութեւր շեշտը), և բացատրում է յաջորդող հնչիւնական փոփոխութիւնները (՝ վերջին ձայնաւորի անհետանումը, բառի միջի ձայնաւորի որոշ փոփոխութիւն կրելը...) և թերես երկար ձայնաւորների բացակայութիւնը: Այն, որ մենք հնդ.—եւր. *b, *d, *g և *bh, *dh, *gh տարբերում ենք (սլաւոնականը, իրանականը... խառնում են), ինչպէս մասնաւոր *g₁ և *g₂ հնչիւնները, այդ, անկասկած, իրեն սկզբնական «դիֆֆերենցիացիայի» համար զատել է յարեթական «հոդում» շար նպաստաւոր միջավայր: Բայց եթէ մեր լեզուների հնչիւնակոմպլեքսը յար և նման է վրացականին, այնուամենայնիւ արտասանութեամբ (արտիկու-



լացիայով») տարբերուել ենք և տարբերուում ենք նրանից. (վրացերէնում «звучи отчеканены», միջակեզուայնականութիւնը («осреднеязычение», палатализация) դեր չի խաղում, և հնչիւնի մոմենտները՝ implosio, explosio, ձայնալարերի գործելը. ուրոյն են). նման «կովկասեան» հնչիւնական կերպարանք է ընդունել «ծ», «ճ», «կ» (վրաց ջ) . . հնչիւններով և օսերէնները (և մասամբ քրդերէնը իրեն «ճ»ով), լինելով զուտ իրանական բարբառ, բայց միջավայրերի ազդեցութեանը ենթարկուելով:

Վերցնելով մեր այդ երկրորդ խնդրի «ձևաբանական» մասը, այսինքն թէ ինչո՞ւն է կայացել յարեթա-հնդա-եւրոպական լեզուաշխարհների սկզբնական յայտնագործումը մեր լեզուների ձևաբանական սխառմի մշակոյթի մէջ, մենք հարկադրուած ենք նոյնպէս ընդհանուր-համեմատական լեզուաբանութեան «գննասկզբունքները» գործադրել, զրկուած լինելով դրանց «գեներգիսի» պատմականօրէն ընմբռնելուց, քանի որ մեր լեզուների յարեթական եւ հնդկա-եւրոպական կազմիչների ձևաբանական դէմքն ու բովանդակութիւնը մեզ անյայտ են, և հիմնուած այդ մեր լեզուների պատմական կացութեանց վրայ, ինչպէս և դրանց համեմատա-լեզուաբանական տուեալների վրայ, մենք մօտաւոր կերպով ենք միայն պատկերացում ստանում այդ կազմիչների նախնական ձևերի մասին: Օրինակ, սեռերի (genus, роды) գոյութիւնը չի կարելի մերժել այդ յարեթական և հնդա-եւրոպական ուրոյն ձևերի մէջ (հնդա-եւրոպական և յարեթական նախալեզուներում սեռերը կային, թէև տարբեր կիրառումով), բայց պատմական հայերէնում սեռերը, իբրև ձևաբանական մի ստորոգութիւն (կատեգորիա), բնաւ բացակայում են. դիտւում են միայն հետքեր, ինչպէս ունի վերջացող բառերի «-ea» հոլովիլը, որը, սակայն, կարող է պարսկերէնից փոխառնութիւն լինել¹⁾,

1) Ունի վերջածանցի հին ձևն է ուրհի, և առաջացել է— (u)ṛi իգական մորֆեմայից=իրանական-ṛi, սանս.-tri (աւետ. barṣṛi-«յղի, մայր»=սանս. bhatri-, տես Chr. Bartholomae, Al-

խառն օ||ա հոլովումը (բարեոյ—բարեաց¹), թերևս—եակ վերջածանցը (երանեակ, լուսնեակ...) հըն. այդ տեսակէտից հետաքրքիր է, օրինակ, սեռերի անհետանումը իրանական լեզուներում, որին նպաստել է անկասկած միջավայրը և պարագաները²). Նմանապէս հնդկա-եւրոպական ձևաբանական սկզբունքը՝ e||օ||—(zero) ակտերնացիան («հերթակայութիւնը») յատուկ է եղել մեր լեզուների հնդկա-եւրոպական «լեզուաձևիչին» և հայոց լեզուական խմորուածքում դեռ շարունակել է ապրել, ունենալով բարենպաստ հող, բայց յետագայում անհետանում է ինչպէս հոլովման հիմքի վերջնթեր վանկում՝ սեռ.—տրակ. «հարս-ին» (<*hars-en-(os) «e» ձայնաւորութեամբ, «հարսամբ» (<*hars-n-bhi) ձայնաւորականութեան բացակայութեամբ (zero) և «հարս-ունք» (<*hars-on-) «օ» ձայնաւորականութեամբ, կամ թէ մի մորֆեմայում, ինչպէս մենք ենք դիտել, նման՝ «ծնունդ», «սնունդ».. բառերի—und (<*onto-) վերջածանցը «օ» ձայնաւորականութեամբ, փոխ-ինդ», «դր-ինդ»³).. բառերի—ind (<*ento-) միևնոյն վերջածանցը

tiranisches Wörterbuch, էջ 946), ուր այդ արիական—tri վերջածանցը ներկայացնում է հնդ.—եւր. *-ter վերջածանցը՝ գործող անունների համար (nomina agentis), «գիրոյի ձայնաւորութեամբ, և իգական—i վերջածանցը. իսկ—(r)ir>—ir օրէնքը իրանական է:

1) Sht A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne 1903, էջ 50:

2) Մասնաւորապէս, օրինակ, սեռերի և հոլովման բացակայութիւնը պարսկերէնում բացատրւում է «սուղական» («էլամական») լեզուի ազդեցութեամբ. Meillet-ն պարսկերէնի վերաբերելով՝ հայերէնի համեմատութեամբ հետեւեալն է ասում. «Le persan au contraire n'a plus ni déclinaison ni genre: or la langue des inscriptions, achéménides du second système qui a disparu, remplacée par l'iranien, n'a ni déclinaison ni genre». Բայց այդ մասամբ սխալ է այն տեսակէտից, որ հոլովումը այդ «աքեմենիան արձանագրութիւնների II-րդ սխտեմի լեզու» գոյութիւն ունէր (տես Н. Марр, Определение яз. II-ой категории ахем. клинообр. надписей. СПб, 1914, էջ 16—21).

3) Դաւառական բառ է՝ «ձեռքի ափի վերի փափուկ մասը» արարատեան և Շիրակի բարբառներում (հ. Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 171):

«e» ձայնաւորութեամբ և «աւանդ», «եռանդ»... բառերի —^{anā} (^{<*}nto) նոյն վերջածանցը ձայնաւորականութեան բացակայութեամբ: Յարեթական «բառաձեռնից» միայն հետքեր են մնացել, նոյնչափ «արխայիկ» ինչպէս և հնդկա-եւրոպականից e || o || zero հերթականութիւնը, այն է՝ կուտր || կտուր || կոտր || կտոր || կտար... կամ փուխր || փշուր... ձևաբանական սկզբունքը, մինչդեռ մասնաւորապէս, օրինակ, յարեթական m-ձևանիշը (մորֆեման), որը կազմուած էր յարեթական լեզուներում «գործող անունները», կարգի թուականները ևն (նման հնդ-եւր. ^{*}ter, ^{*}er վերջածանցին), լինելով ամենաբնորոշիշը յարեթականի և սեմականի համար և կենդանի յատկութիւն կազմելով և այժմեան յարեթական լեզուներում, — այդ m-մորֆեման (նախածանց էր) բնաւ յայտ չի գալիս մեր հայերէնի պատմական ձևերում: Մեր հոլովման քանակը և ֆունկցիաները շատ նպաստաւոր վայր են գտել, քանի որ այդ տեսակէտից յարեթականում և հնդկա-եւրոպականում «կոնտակտի» են հանգիպում: Թեքման (флектирование) սկզբունքը թէ հոլովման և թէ խոնարհման մէջ մի տեսակ «կոմպրոմիսս» է ներկայացնում. եթէ դրա սխառման աւելի յարում է հնդկա-եւրոպականին, մասնաւոր իրեն «թեմաներով», ինչպէս a, o, i, u, n, r հոլովման թեմաները, կամ ներկայի և անցեալի թեմաները խոնարհման մէջ (տեսան—տես, կորնչ—կոր...), այնուամենայնիւ յարեթական «լեզուասկզբունքը» (языковое начало) իրեն մասնակցողական դերը ունեցել է, թէ և թոյլ, ինչպէս յոգնակիութեան կամ երկակիութեան համար յատուկ ձևանիշի գործածելը (^{*}kh—անձամբ—անձամբք, եմ—եմք, ես—էք էաք, էիք, տեսաք, տեսիք..., t, n, r—մանկաթի, բերդեան, որեար..., v—աչւի, ձեռւի...) կամ խոնարհման «լծորդական» սկզբունքը, նման վրացականին և ուրիշ յարեթական լեզուներին¹⁾: Ընդհանրապէս այն պէտք է ասել, որ անհնարին է շատ դէպքերում, մասնա-

1) Տես, Н. Марр, Осн. Табл., տախտակը և բացատրութիւնը, և նրա «Предл. яз. II-ой категории ахем. кл. надл...» էջ 30.

ւանդ մանրամասնութիւններում, երեւան հանել երկու լեզուատիրութիւնքների համագործակցութիւնը և «скрещеніе» մեր հնչա-ձևաբանական սիստեմի կառուցման հանդէպ, քանի որ անհրաժեշտ տուեալները պակասում են. և օրինակ, նման «ձևումը», ինչպէս արդի բարբառների «շորեր-շորնրներ» (> շորներ) || շորերնի», ուր համադաս են յոգնակիութեան երկու կենդանի ձևանիշեր (' մէկը անձի-ն, մէկը իրի-ր), յատուկ կարող էր լինել մեր յաբեթական կազմիչ շերտին, մնալով իբրև «նստուածք» (отложение), բայց նոյն հնարաւորութեամբ կարող էր և նոր զարգացած երևոյթ լինել, բղխած մեր լեզուի արդէն կաղապարուած բնութիւնից¹⁾:

Գալով վերջապէս մեր խնդրի երրորդ մասին, այն է՝ մեր լեզուների յաբեթա-հնդկաեւրոպական «նիւթական նստուածքին» (' ձևանիշեր և բառեր), մենք աւելորդ չենք համարում նորից շեշտել, որ այդ «նիւթական նստուածքի» տակ միայն այն ձևանիշերն ու բառերը պէտք է հասկացուին, որոնք մնացած են մեր հայոց լեզուախմբի սկզբնական իմօրումից, և հետևապէս պէտք է մեկուսացուի և առանձին հաշուի առնուի, եթէ այդ հնարաւոր է, այն լեզուական ժառանգութիւնը, որը թողել են այլ և այլ նորեկ էթնիկական հոսանքներ (մեծ մասամբ Ասոր-պատականից և Կովկասից), ձուլուելով բուն հայկական ժողովրդի հետ. իսկ փոխառնութիւնները (Lehnwörter, заимствованія) բնաւ առնչութիւն չեն կազմում մեր լեզուների «ազգակցական բովանդակութեան» հետ, չազդելով քերականութեան վրայ, և համարեա թէ բոլորն էլ

1) Եւ այդ տեսակէտից անշատ զուգահիշողութիւն կարող է լինել, օրինակ, սլաւոնական նոյն կերտուածութիւնը, ինչպէս տեղում («թխիւում») «лыжа на одну ногу» — տեղում-ն («թխիւում-ար») «пара лыжъ» — տեղում-ն-ալ («թխիւում-ար-ալ», —al <—ag — հայոց-er) «нѣсколько паръ лыжъ». տես՝ Н. Марръ, Яфетическія названія деревьевъ и растеній, СПб, 1915, էջ 771. հմտ. գաւառական՝ կնկտիներ, ձիանիք, ախպէրտինք., կամ ոռւսաց «пойдемте», ուր հանդիպում ենք երկու վերջաւորութեան:

չոկնուած են. (Hübschmann-ի Armenische Grammatik-ում քերուած են մօտ 1500 պարսկական, յունական, ասորական և արարական հասարակ բառեր, մտած մեր լեզուների մէջ, չհաշուելով յատուկ անունները ¹⁾):

Յետոյ այն պէտք է ասել, որ մեր լեզուների բուն «ազգակցական բովանդակութիւն» կազմող մասը հաւասարաչափ կերպով չէ ուսումնասիրուած. հնդկա-եւրոպագէտ—լեզուաբանները «հայ լեզուն» միայն հնդկա-եւրոպական համարելով («ազգուած կովկասեան լեզուներից»), ամբողջապէս և ծանրացել էին սոսկ այդ ուղղութեամբ տեսարանելու վրայ, թէև զուտ հնդկա-եւրոպական բառաւորմատներ մեր լեզուներում երեք հարիւրից աւել չի պահուած, իսկ մնացած ստուարագոյն լեզուական նիւթը (մի քանի հազար բառեր) աչքաթող առնուած մնացած էր. յարեթական նորագոյն լեզուաբանութիւնն էլ, գինուած լինելով յաւելեալ նոր լեզուների գիտութեամբ ²⁾ և յենուելով մեր հայոց լեզուների փաստական տուեալների և պատմութեան վրայ, անդօր է տակաւին մեր լեզուների յարեթական հիմնաշերտի բովանդակ ուսումնասիրութիւնը տալ, քանի որ դրա համար նախապէս բաւականին պարզուած պէտք է ունեցուի և զուտ յարեթական լեզուների համեմատական կազմը, որը գիտականօրէն դեռ նոր է հանդէս բերում: Տեսնենք ապա՝ թէ մեր լեզուախմբի ի՞նչ ձևանիշեր և բառեր են վերագրւում «փոխգիական հայերին» և Հայաստանի անդրածինների լեզուների սեպհականութեանը, իբրև այդ լեզուախմբի հնդկա-եւրոպական և յարեթական կազմի շերտերի «նիւթական պատկանելիութիւններ»:

1) Բերուած են՝ հին և միջին պարսկական բառեր—686, յունական—512, նոր պարսկական և արարական—171, ասորական—133:

2) Այն է՝ վանական և սուղական (էլամական) բնեռագիրների լեզուները, «վրացական» լեզուները՝ քարեթական, մինդրիւ-ճանական և սւանական, «կովկասեան» ուրիշ լեզուներ, ինչպէս ասիականներ, չեչենական, լադգիների լեզուն և այլն:

Հնդկա-եւրոպական հիմնաշերտի այդ նիւթական պատկանելիութիւնները մեծ մասամբ արդէն երևան են հանուած, թէև շատ ժամանակ են խելի Մինչև Hübeshmann-ը կատարուած բառական ստուգաբանութիւնները (ΕΤΗΜΟΛΟΓΙΗ) ամփոփուած են այդ գիտնականի «Armenische Grammatik (V Theil)»-ում, թուով 438, սակայն զրանցից մօտ 140-ը ¹⁾ մեր կարծիքով պէտք է դուրս հանուեն թէ նրա համար, որ ստոյգ չեն հնչաբանական օրէնքների տեսակէտից, երկբայելով նոյնպէս Hübeshmann-ից կամ ուրիշ այնտեղ յիշած լեզուաբաններից, և թէ յարեթական լեզուաբանութեան տուեալներին անգիտակ լինելու պատճառով։ Աւելորդ ենք համարում թուել այնտեղ ստուգաբանուած այդ զուտ հնդկա-եւրոպական բառերը, որոնց վրայ (մօտ 300 բառ) եթէ աւելացուին յետագայում գտած կամ գտնուելիք ստուգաբանութիւնները (100—150-ից չի անցնի), կունենանք մօտ 400—450 հնդկա-եւրոպական բառեր (արմատներ), թողնուած փոխզիական եկւորներից («հայերից»), — մի գումար, որը միանգամայն բաւական է մի որևէ Mischsprache-ի մի հարազատ հիմնաշերտը որակելու և բնորոշելու համար, բայց մեծ չէ ուրիշ լեզուների հնդկա-եւրոպական բառապաշարների հանդէպ (ինչպէս յունականի, արիականի կն)։ Նոյնը պէտք է ասել և մեր լեզուների հնդ.-եւր. ձևանիշերի մասին։ Եթէ այդ վերջինը աւելի լայն կերպով վերցնենք և իբրև ձևանիշ (մորֆեմա) հառկանանք թէ ածանցները (¹ նախածանց և

1) Դրանցից կան շատերը, որ հնդկա-եւրոպական են, բայց ստոյգ ստուգաբանութիւն չունեն։ շատերը իրանական են՝ մուծուած մեր կարծիքով այլ և այլ իրանական ցեղերից կամ փոխառնուած (, ինչպէս §§ 46, 48, 58, 66, 70, 109, 113, 127, 130, 145, 221, 224, 227, 228, 273, 279, 287, 306, 308, 371, 385, 386, 387)։ շատերը զուտ յարեթական են (, ինչպէս՝ §§ 4, 50, 53, 56, 73, 76, 84, 87, 95, 107, 111, 132, 138, 139, 156, 157, 194, 195, 197, 199, 202, 205, 211, 214, 217, 218, 219, 220, 239, 246, 259, 260, 270, 301, 319, 320, 321, 322, 324, 330, 348, 362, 363, 367, 396, 406, 416, 417, 420, 422, 424, 434)։ շատերը «բնաձայնական» են (onomatopoëtisch) — կն։

վերջածանց) և թէ թեքման վերջաւորութիւնները, այն ժամանակ կտանանք հետեւեալ ձևանշական (մորֆեմական) պատկերը, յատուկ մեր լեզուախմբի հնդ.-եւր. շերտին: հնդ.-եւր. ածանցներ են՝—մն (շարժումն, սերմն)—ն (ոտն, դառն, դուռն..),—ի (աղի, ջրի, երկաթի..=հնդ.-եւր. *-iyō և *-iya). —ունդ,-ինդ,-անդ (ծնունդ, փոխինդ, եռանդ.. =*-onto-, *-ento-, *-nto¹), —ուտ, —եստ, —իստ, —աստ, (փախուտ, արուեստ, հանգիստ, առագաստ), —ոյթ (երեւոյթ, բնոյթ), —իւն (արիւն, անկիւն.., գոչիւն, թնդիւն.., մեծութիւն²), —ւոր (թագաւոր, ալեւոր..), —տայ (գաւառական բառերում՝ կամետայ, բնատայ, ծամկոտէն, ծէրատէն³).., տես և Hübsch., Arm. Gr. էջ 488 սամետիք բառի մասին), —աւղ (ծնաւղ, ուտաւղ..=*(a)tl-), —աւր (աստանաւր, անդանաւր..=*(a)tr-¹), —եր (մեր-ձեր, ձմեռն-ամառն, հինգ-եր-որդ, վեց-եր-որդ..=*-er), —ան «վրայով, ВЛОДЬ ПО» (անոտք, անկողին, մշեցոց անբահի⁴), անոտնեայ⁴)=յուն. ανα-, դոթ. an- (գերմ. an), սանս. ana-..¹)..: Իսկ թեքման հնդ.-եւր. վերջաւորութիւններն են՝ հոլովման մէջ՝ գործիականի «ւ», «բ» (մարդով, ան-ձամբ, ձեռք..), հայցականի և նախկին տեղականի (locativus) «s» ձևանիշը (=հնդ.-եւր. *-ns և *-sn), տրականի «մ» (այս-մ, ու-մ..), խոնարհման մէջ՝ «մ»—«ս»—«յ»

1) Ստուգաբանութիւնը մերն է:

2) Այդ վերացական—«իւն»ը պէտք է տարբերել նուազական —«իւն»-ից կորիւն և թոժիւն բառերում, ուր այդ նուազական —lwe-ը=յուն.-ωον (օրինակ՝ ποσγωον նուազական է ποσγος «մողի» բառից, AG, 475):

3) Դրանց նշանակութիւնը տես հ. Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջք 326, 108, 303, 307, որոնց—այ մասնիկը նշանակում է «գօտի» և հնդ.-եւր. ծագում ունի (AG, 488):

4) «Անբահի» մշեցոց բարբառում նշանակում է «բահակոթի վրայ հազցրած տափակ փայտը, որի վրայ ոտը զարկելով փորում են» (Ամատ., Հայոց բառ ու բան, էջ 61 «աստղարակ» բառի հետ). Իսկ նախնեաց «անոտնեայ» բառը նշանակում է «պատուանդան (թագաւորական գահի կամ աթոռի տակի)» և կիր է առնուած «գիրք մնացորդաց»-ում (Գր. Խալաթեանի հրատարակութեան, տես «Հայոց բառ ու բան»-ում էջ 38):

(¹ հմ-ես-^{*}եյ > է, գոմ-գոս-գոյ, կամ-կաս-կայ..) և «ն» (¹ են, գոն, կան..), անցեալ կատարեալի «ց»-ն (գնացի..), ապառնիութեան «ց»-ն (իցեմ, տաց, գնալոց..), անորոշ և անցեալ դերբայի «լ»-ն (<-lo-==սլաւ. лѣ, даѣ, вѣяѣ..)¹ ապառնի հրամայեականի «ջ»-ն (¹ տեսանիջիր,-ջիք, տես-ջիր,-ջիք..,=^{*}dhi¹), «ան»-, «չ»-, «նու»- ձևանիշերով կազմուողներկայի«թեման» (¹տեսանեմ-մեռանիմ, փախչիմ, առնում-զգենում..²), «ե»-յաւելումը (¹ եբեր, ետես..):

Յամենայն դէպս հնդկա-եւրոպական «մորֆեմակա-նութիւնը» մեր լեզուներում բաւականին ստուար քանակութեամբ է մնացել, թէև յարեթական մասն էլ, ինչպէս կտեսնենք, նուազ չափով չի ներկայացուած: Իսկ ընդհանրապէս այն պէտք է ասենք, որ մեր լեզուախմբի «նիւթական հնդկա-եւրոպականութիւնը» (¹ 400—450 բառաւորատ, և 30—35 ձևանիշեր), ինչպէս և հնդկա-եւրոպական դիմագծեր կրող մեր հնչա-ձևաբանական սիստեման մեզ հասած լոկ մի մասը կազմում պէտք է լինին այն հնդ.-եւր. լեզուական պաշարի, որը ներմուծել էին Հայաստան եկւոր փոխզինական հայերը. պահուել են անտարակոյս շատ բնորոշիչ հնդ.-եւր. պատկանելիութիւններ, որոնք իսկ բաւական են մեր լեզուների ազգակցականութիւնը բովանդակապէս որակելու³):

1) Այդ ^{*}dhi-ն յատուկ է արիականին, սլաւոնականին («виждѣ» «նայիր, տես» < ^{*}вид-дѣ), տես Мейе, Введение, էջ 194, և նրա Esquisse., էջ 90: Բայց այդ ստուգաբանութեանը պէտք է զգոյշ վերաբերուել, քանի որ, օրինակ, վրացերէնում «ըզձական» եղանակը «d» ձևանիշով է կազմուում, և մեր «ջ»-ն կարող է զրա հայոց «համարժէքականը» (эквивалентъ) լինել: Նմանապէս «արմենական» կրաւոր բայի u (w) ձևանիշը մնացորդ կարող է լինել և հնդ.-եւր. ^{*}sv-«իսքը» ձևից (հմմտ. ३०३, suus < sovos, «свой».) և հանուր յարեթական կրաւորականի u ձևանիշը (տես Н. Марр, Определение яз. II-ой категории. էջ 31):

2) Հմմտ. յուն. ἄρρωμαι (աորիստը ἡρόμεν) «ձեռք բերել», ἔρρωμαι «հազնել, օժեշտանալ» (ves-արմատից):

3) Ունիմ մեր լեզուների հնդկա-եւրոպական հնչիւնաբանութեան մանրամասն հետազոտութիւն, որը հանդերձ այդ լեզուախմբի հնդ.-եւր. բառարանով յուսով եմ լոյս ընծայել:

Յարեթական շերտը, ինչպէս մասնաւորապէս և դրա այստեղ ուրուագծելիք «նիւթական պատկանելիութիւնները» նոր են ուսումնասիրուում. հետեւապէս և ողջ տեղեկութիւն էլ չի կարելի տալ: Մորֆեմաներից, օրինակ՝ յարեթական են՝ —ունի (' Բազրատունի.., դաւառական «վիրունի», «պահունի», «արեգունի»..), —ենի (' դեղձնի, ձիթենի..), —եղ (կ—եղ—էն) վերջածանցը (' ձայնեղ, անեղ.., կանաչեղէն..), —երէն || —արէն (' հայիրէն, յունարէն..), իսկ թեքման վերջաւորութիւններից հոլովման մէջ՝ յոգնակիութեան «ք», «ն», «տ», «ր» ձևանիշերը (' որդիք, աւագանի, որեար, մանկտի.., «կնկտիններ», «ախպէրտինք»..), երկակիութեան «ւ»-ն (' «աչւի», «ձեւուի»..), բացառականի —«ից» վերջաւորութիւնը («Նրեանից», «ձեռից»..), յոգնակիի սեռ.—տրակ.—բաց. «ց»-ն, երևի և սեռականի «ր»-ն (մարդոյր, ոյր. այսր..) ¹⁾.., իսկ խոնարհման մէջ՝ յոգնակիութեան «ք»-ն (եմք—գումք—կամք.., էք—գոյք—կայք.., էաք.., տեսաք.., տեսիք..) և թերեւ երկրորդ եւ երրորդ դէմքի «ր»-ն (' տեսանէիր, տեսանէր.., տեսեր..), հրամայականի «ր»-ն (փախ—իր..) և անցեալ կատարեալի երրորդ դէմքի «ւ»-ն (ծնաւ, կատարեցաւ..):

Անկասկած՝ յարեթական մորֆեմականութիւնը համեմատաբար աւելի նուազ քանակով է մնացած, քան հնդկա-եւրոպականը, բայց «բառարանի» տեսակէտից յարեթականը գերիշխում է, մանաւանդ մեր արդի բարբառներում ²⁾: Աւելորդ համարելով բերել այստեղ ստուգաբա-

1) Սեռական «ջ»-ն (' գեղջ, կնոջ..) հաւանական է հնդ.—եւր.—ինի, և պէտք է կապակցուի, մեր կարծիքով, սլաւ. «ѣ»-ի հետ (' добро, чего..):

2) Քանակաբար, օրինակ, Աշտարակի լեզուի վերաբերեալ, որը ուսումնասիրել հմ, այն կարող հմ ասել, որ հնդկա-եւրոպական բառերը հազիւ 10⁰/₁₀ կազմեն, այն ինչ մնացածը յարեթական է. ի հարկէ պէտք է ջոկնուեն հնադոյն հարազատ յարեթականները և յետագայում այլ և այլ եղանակներով մուծուածը, որը դեռ կատարուելիք խնդիր է, այն էլ շատ դժուար:

նուած մեր յարեթական բառերը¹⁾, մենք, սակայն, ընդհանրապէս այն պէտք է ասենք, որ հէնց հնդկա-եւրոպական «կոնսոնանտիզմի» համաշափութեան օրէնքները և դրանց որոշակի անդրադարձումը մեր լեզուների մէջ միանգամայն համոզեցուցիչ և բաւական պէտք է լինէին «ապո-հնդկա-եւրոպական» համարել նման բառաձևոյթներ, ինչպէս՝ սովոր(ել), շառաւիղ, ժողով, տերեւ., («լիաձայնաւորութեամբ»), կամ՝ ծեծ(ել), կապ(ել), պատ(ել)․․, կամ՝ խեղդ(ել), ճաճանչ, ճահիճ, ծղրիդ ելն ելն:

Մասնաւորապէս պէտք է շեշտել, որ, օրինակ, բոյսերի և ծառերի անունները գրեթէ բոլորը յարեթական են, ինչպէս և մետաղների անունները («արծաթ», «ոսկի», «պղինձ», «երկաթ», «արճիճ», «պողովատ»):

Մեր կարծիքով՝ այստեղ երևան են բերուած և յայտագծուած պատմա-համեմատական լեզուաբանութեան այն փաստացի տուեալները, որոնք միանգամայն որակում և բնորոշում են մեր «հայա-արմենական» բուն լեզուական պատկանելիութիւնների «ազգակցական երկուութիւնը» թէ հնչա-ձևաբանական սիստեմի տեսակէտից և թէ բառա-ձևանշական: Այդ մեր լեզուների «ազգակցական երկուութիւնը» հանդէպ հնդկա-եւրոպականի և յարեթականի-գիտական փաստ է, կարիք ունեցող թերևս մասնաւոր լրացումների, և ուղիղ հետեանքն է հանդիսանում հայ ազգութեան պատմական խմորման պրոցեսի:

Մենք անտես առանք մեր լեզուների շարահիւսական մասը, որը մեր խնդրի հանդէպ կարող է միայն լրացուցիչ նշանակութիւն ունենալ: Նմանապէս երկրորդական տեղ են բռնում և մեր խնդրին անմիջապէս ոչ յարում բարբառականութեան և մեր երկու լեզուների փոխյարա-

1) Տես Ն. Մառի՝ Яфетические элементы въ языкахъ Арменіи (I—VII) շարքը, Яфетич. К въ арм. языкѣ և ուրիշները: Այդ ստուգաբանութիւններից շատերը մեր կարծիքով վերաբնիկ են:

բերութեան խնդիրները, որոնք կարիք ունեն մանրամասն տեսութեան¹⁾։

Աւելացնենք նաև, որ մեր լեզուախմբի բուն ազգակցական բովանդակութեան մանրամասնութիւնները պար-

1) Հմմտ. հէնց մեր լեզուների հնդ.-եւր. տարրերի մէջ՝ «վեր»-«գեր», «կով»-«կոգի», «արեւ»-«արեգ» (արեգ-ակն, արեգունի), «չու»-«չոգ-այ», «առու»-«առողջ-անեմ» (առողջ-անեմ) (բայց «ուրու»-«երեւ»-իմ)․, կամ հն.-եւր. *սկզբնական *y-ի տարրեր անդրադարձումը էլն։ Իսկ մեր լեզուների տարրերակութիւնը (дифференциация) առաջացել է, մեր կարծիքով, հետեւալ կերպով (հակառակ պը. Մառի տեսութեան). սկզբնական մեր հնդկա-եւրոպա-յարեթական խառն լեզուական կազմակերպութիւնը համատարած և պորձածական է եղել միայն որոշ շրջանում ('Հայաստանի հարաւ-արեւելքում)։ Յետագայում այդ կապալարուած խառն լեզուն ժողովրդի միջոցով հետզհետէ տարածուել է և արդէն զուտ յարեթական գաւառներում, շարունակուելով մինչև իսկ Քրիստոսից շատ դարեր այս կողմը (ինչպէս Միւնիքում, Ուտիում․)։ Իսկ assimilativ հոսանքը բնականաբար եղել է յաջորդական ըստ տեղի, այսինքն մի որ և է գաւառ իւրացրել է (ձեւափոխելով) հարեան գաւառի «հայ» լեզուն, իսկ իրենից վերցրել են ուրիշները, նոյնպէս ձեւափոխութեան ենթարկելով,— նոյնը կատարուել է և կատարուել է և ուրիշ լեզուներում և հէնց մեր արդի բարբառներում։ Այդ զուտ ժողովրդական և բնական եղանակով նախնական «փոխզիւթ-յարեթական» լեզուն աւելի էր յարեթականանում, այլազան կացութիւններով յատուկ դառնալով այլ և այլ «հայացած» վայրերի, մինչդեռ ազնուականութեան խաւերը (առաջացած Տիգրան Մեծի ժամանակից) աւելի ողջ էին պահում սկզբնական «փոխզիւթ-յարեթական» հայ լեզուն,—ի հարկէ իրեն զարգացած ձեւում (= զբարարի հին ձեւ) որին նպաստում էր և իրենց ուրոյն կենցաղավարութիւնը։ Նմանապէս բուն ժողովուրդը այդ «փոխզիւթ-յարեթական» նախալեզուի որբանում միշտ էլ պահած պէտք է լինէր այդ լեզուն իրեն պատմական զարգացման ձեւում, թէև ազդեցութիւն կարող էր կրել և ուրիշ «հայացած» վայրերի նորակերտ բարբառներից։ Հետևապէս սկզբնական այդ «փոխզիւթ-յարեթական» լեզուն քանի հեռուն տարածուէր այնքան պէտք է տուէր իրեն իսկութեամբ և եթէ, օրինակ, ka ճիւղի հարաւային բարբառները ունեն բացառականի «է»-ն, Մշոյ բարբառում գտնում ենք թէ «է» և թէ «ից», իսկ աւելի հիւսիս միայն «ից». նմանապէս մշեցոց ոյ>ու, իւ>ու, այ>է, ինչպէս և հին

գելու համար նախապէս հաշուի առած պէտք է լինին «օտարոտի նստումները», որը դեռ կատարելի գործ է:

Իսկ մեր «հայա-արմենական» լեզուախմբի գիտական մեծ նշանակութիւնը աւելի քան ակնեւն է. այդտեղ շահագոգոտած է ոչ միայն պատմական լեզուաբանութիւնը, այլ և ընդհանուր լեզուի գիտութիւնը (linguistica, наука о языках), որի համար մեր լեզուների «խառնակ» ձևաւորիլը մի շատ հետաքրքիր և տիպիկ երևոյթ է:




«հ» շնչիւնի «հ» և «խ» ձևերում պահւելը (տես Հ. Աճառեան, Հայ Բարրառագիտութիւն, էջ 117), միջին տեղն են ցոյց տալիս հիւսիսային և հարաւային բարրառների մէջ. այդ էտապները լաւ դիտելի են, և թերեւս առիթ ունենանք մանրամասն կանգ առնելու այդ խնդրի վրայ:


58

18

derer, welche die Wissenschaften zu einem neuen Aufschwung
bringen wollten, mußten sich zuerst mit der Geschichte
des Vaterlandes beschäftigen. Die Geschichte ist die Basis
aller Wissenschaften, und ohne sie kann man nichts
verstehen. Die Geschichte ist die Basis aller Wissenschaften,
und ohne sie kann man nichts verstehen. Die Geschichte ist
die Basis aller Wissenschaften, und ohne sie kann man
nichts verstehen. Die Geschichte ist die Basis aller
Wissenschaften, und ohne sie kann man nichts verstehen.

Die Geschichte ist die Basis aller Wissenschaften, und ohne sie
kann man nichts verstehen. Die Geschichte ist die Basis aller
Wissenschaften, und ohne sie kann man nichts verstehen. Die
Geschichte ist die Basis aller Wissenschaften, und ohne sie
kann man nichts verstehen. Die Geschichte ist die Basis aller
Wissenschaften, und ohne sie kann man nichts verstehen.







A ^{II}
1897

Մեկ
Օրինակ







ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0028724

ЦЕНА

1897